# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Կրկին Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ղեկավարի 10.10.2019 թվականի թիվ 28 որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՌՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(060) 80-30-80

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 10 » հոկտեմբերի 2019 թվականի N 28

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԳՈՀԱՐԻԿ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 0.14 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ կետերի պահանջներով, հաշվի առնելով, որ կառույցը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և Լոռու մարզի Ջրաշեն համայնքի 8-րդ փողոց, 5 տան բնակչուհի Գոհարիկ Վոլոդյայի Գասպարյանի համաձայնությանը գնման նախապատվության իրավունքով գնելու իրենց կողմից ինքնակամ կառուցված շնությունները, որոնք չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, քանի որ կառույցները կառուցված չեն ինժեներատրասպորտային օբյեկտների օտարման գոտում կառուցված չեն քաղաքացիական նորմերի և կանոնների էական խախտումներով և /կամ/ չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Օրենքի ուժով օրինականացնել և ճանաչել Գոհարիկ Վոլոդյայի Գասպարյանի սեփականության իրավունքը Ջրաշեն համայնքում 06-095-0063-0002 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.14 հա Գոհարիկ Վոլոդյայի Գասպարյանի սեփականաշնորհված տնամերձ հաղամասի վրա ինքնակամ կառուցված 11.83 քմ բնակելի տան, 119.2 բնակելի տան նկուղի, 4.74 քմ բաց պատշգամբի, 15.65 քմ մառանի, 8.78 քմ պարիսպի, 70.24 քմ օժանդակ շինության, 2.57 քմ աստիճանահարթակի, 7.82 քմ սանհանգույցի, 7.24 քմ ծածկարանի և 12.81 քմ զուգարանի նկատմամբ:
2.16.57 քմ բնակելի տան, 125.11 քմ օժանդակ շինության և թվով 4 ինքնակամ կառույցների ձևափոխությունների համար համայնքի բյուջե վճարել 9150 ՀՀ դրամ, 41300 ՀՀ դրամ, 2200 ՀՀ դրամ:
3.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տան նկուղը կառուցվել է ինքնակամ 1994 թվականին, այն չէր կարող կառուցվել բնակելի տան կառուցումից հետո, քաղաքացու կողմից ինքնակամ կառուցված նկուղի վրա պետական միջոցներով կառուցվել էր 1 հարկ և այն սեփականաշնորհվել է քաղաքացուն: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոման 22-ի 1-ին կետը, օրինականցնել և ճանաչել Գոհար Վոլոդյայի Գասպարյանի սեփականության իրավունքը 119.2քմ նկուղի նկատմամբ:
4.Բնակելի տան 1-ին հարկի միջնորմների փոփոխությունը գտնվում է ռիսկայնության 1-ին գոտում և շին թույլտվություն չի պահանջում:
4.Ուժը կորցրած ճանաչել 24.06.2019 թվականի թիվ 17 որոշումը:
5. Վերոհիշյալ անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Ջրաշեն համայնք, 8-րդ փողոց, 5:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՌՈՒՌՈՒՍՅԱՆ